Հավելված N 9

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020 թվականի մայիսի 7-ի
թիվ 54-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ **22-4-23.4-Ղ3-1**)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Կոմիտեի նախագահին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է աերոդրոմների սերտիֆիկացման գործընթացի իրականացումը.
2. ապահովում է աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություն-ներին գործունեության թույլտվություն տալու (սերտիֆիկացման) գործընթացը.
3. ապահովում է քաղաքացիական օդանավակայանում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկում իրականացնող կազմակերպություններին թույլտվություն տալու գործընթացը.
4. կազմակերպում է սերտիֆիկացված աերոդրոմների, աերոնավիգացիոն սպասարկման գործունեության թույլտվություն ստացած (սերտիֆիկացված) կազմակերպությունների և այնտեղ շահագործվող վերգետնյա միջոցների ուսումնասիրությունների անցկացումը և վերահսկողությունը.
5. ապահովում է սերտիֆիկացված աերոդրոմներում, ինչպես նաև աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններում նախատեսվող նշանակալի

փոփոխությունների, սպառնալիքների, թռիչքային անվտանգության ռիսկերի գնահատումը.

6. ներկայացնում է առաջարկություն սերտիֆիկատի և թույլտվության դադարեցման կամ կասեցման, ինչպես նաև սահմանափակումների կիրառման վերաբերյալ՝ թռիչքների անվտանգությանը սպառնացող բարձր ռիսկերի պայմաններում.
7. ապահովում է Վարչության գործառույթներին առնչվող աերոնավիգացիոն տեղեկատվության հրապարակման գործընթացը.
8. կազմակերպում է օդային երթևեկության կազմակերպման կարգավարների թեստավորումը, կարգավարների վկայականների, հատուկ և որակավորման նիշերի շնորհումը, վկայականների գործողության ժամկետի երկարաձգումը, վկայականների գործողության կասեցումը և դադարեցումը.
9. մշակում և հաստատման է ներկայացնում Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր.
10. ներկայացնում է եզրակացություններ աերոդրոմների շրջակայքում կառուցվելիք բարձրաբերձ շենքերի և շինությունների (կառույցների) շինարարական նախագծերի վերաբերյալ.
11. ուսումնասիրում և ներկայացնում է առաջարկություններ օդանավակայանների հետագա զարգացման հատակագծերի վերաբերյալ.
12. ապահովում է աերոդրոմների և այնտեղ շահագործվող համակարգերի, վերգետնյա տեխնիկական միջոցների ու ծառայությունների պատրաստականության ուսումնասիրությունների անցկացումը, ինչպես նաև քաղաքացիական օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների վերահսկողությունը.
13. ապահովում է նոր օդային ուղիների, թռիչքային սխեմաների ներդրման և քարտեզագրման (ՊԱՆՍ-ՕՊՍ/PANS-OPS), ինչպես նաև տրամադրվող աերոնավիգացիոն տեղեկատվության ճշտության նկատմամբ վերահսկողության գործընթացները.
14. ապահովում է սերտիֆիկացված աերոդրոմների և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների թռիչքային անվտանգության և որակի կառավարման համակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության գործընթացները.
15. ապահովում է ՀՀ օդանավակայաններում շահագործվող վերգետնյա միջոցների ու ծառայությունների նկատմամբ վերահսկողության գործընթացները.
16. ապահովում է ՀՀ օդանավակայանների աերոդրոմներում օդանավերի հետ տեղի ունեցած թռչունների բախումների վերաբերյալ տեղեկատվությունների հավաքագրման, համակարգման և քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը տարեկան հաշվետվություն ներկայացնելու գործընթացները, ներկայացնում է առաջարկություններ՝ ուղղված դրանց նվազմանը.
17. մասնակցում է ավիացիոն պատահարների, միջադեպերի և իրադարձությունների հետաքննություններին.
18. ըստ ստացված ամսական զեկույցների ուսումնասիրում է աերոնավիգացիոն սպասարկման և աերոդրոմների շահագործման բնագավառներում թռիչքների անվտանգության հետ կապված խափանումները և ներկայացնում է առաջարկություններ՝ դրանք բացառելու նպատակով.
19. համագործակցում է ՀՀ գերատեսչական մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառի միջազգային կազմակերպությունների հետ.

20. ապահովում է անցկացվող աշխատանքային և մասնագիտական խորհրդակցություններին, սեմինարներին և քննարկումներին Վարչության մասնակցությունը:

Իրավունքները՝

- աերոդրոմների սերտիֆիկացման, աերոնավիգացիոն և քաղաքացիական օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվություն տալու նպատակով պահանջել համապատասխան փաստաթղթեր, հիմնավորումներ և անհրաժեշտ տեղեկատվություն.
- սերտիֆիկացված աերոդրոմների և այնտեղ շահագործվող վերգետնյա միջոցների ուսումնասիրություններ և վերահսկողություն իրականացնելու նպատակով աերոդրոմ շահագործողից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն.
- գործունեության թույլտվություն ստացած (սերտիֆիկացված) աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների ուսումնասիրությունների և վերահսկողության անցկացման շրջանակներում կազմակերպությունից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն.
- սերտիֆիկացված աերոդրոմներում նշանակալի փոփոխությունների իրականացման շրջանակներում ստուգել թռիչքների անվտանգության ռիսկերի գնահատման արդյունքները և անհրաժեշտության դեպքում աերոդրոմ շահագործողից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն.
- աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններում նշանակալի փոփոխությունների իրականացման շրջանակներում ստուգել թռիչքների անվտանգության ռիսկերի գնահատման արդյունքները և անհրաժեշտության դեպքում կազմակերպություններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն.
- ստուգել հրապարակման ենթակա աերոնավիգացիոն տեղեկատվության ճշտությունը.
- օդային երթևեկության կազմակերպման կարգավարներին տրամադրել գործող կարգավարի կամ ուսանող կարգավարի վկայական՝ համաձայն սահմանված ընթացակարգի.
- օդային երթևեկության կազմակերպման կարգավարներին շնորհել հատուկ և որակավորման նիշեր, երկարաձգել վկայականների, հատուկ և որակավորման նիշերի գործողության ժամկետները.
- խախտումներ և անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում կասեցնել օդային երթևեկության կարգավարների վկայականների գործողությունը.
- ՀՀ աերոդրոմների շրջակայքում կառուցվելիք բարձրաբերձ շենքերի և շինությունների (կառույցների) շինարարական նախագծերի, ինչպես նաև օդանավակայանների հետագա զարգացման հատակագծերի ուսումնասիրությունների ընթացքում համապատասխան կազմակերպություններից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն և հիմնավորումներ.
- սերտիֆիկացված աերոդրոմների և այնտեղ շահագործվող համակարգերի, վերգետնյա տեխնիկական միջոցների ու ծառայությունների պատրաստականության, ինչպես նաև քաղաքացիական օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ ուսումնասիրությունների շրջանակներում պահանջել համապատասխան փաստաթղթեր, հիմնավորումներ, հավաստումներ և անհրաժեշտ տեղեկատվություն.
- վերահսկել նոր օդային ուղիների և թռիչքային սխեմաների ներդրման և քարտեզագրման (ՊԱՆՍ-ՕՊՍ/PANS-OPS) գործընթացը, անհրաժեշտության դեպքում

պահանջել համապատասխան հաշվարկներ և հիմնավորումներ՝ կապված նոր օդային ուղիների և թռիչքային սխեմաների ներդրման և քարտեզագրման (ՊԱՆՍ-ՕՊՍ/PANS-OPS), ինչպես նաև տվյալներ դրանց ճշտության ապահովման հետ.

- սերտիֆիկացված աերոդրոմների և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների թռիչքային անվտանգության և որակի կառավարման համակարգերի պահանջների կատարման և այնտեղ շահագործվող վերգետնյա միջոցների ու ծառայությունների վերահսկողության շրջանակներում անարգել մուտք գործել համապատասխան օբյեկտներ, շինություններ և ծառայություններ.
- ՀՀ օդանավակայանների աերոդրոմներում օդանավերի հետ տեղի ունեցած թռչունների բախումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և սահմանված կարգով քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը տարեկան հաշվետվության ներկայացման նպատակով համապատասխան կազմակերպություններից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն.
- մասնակցել ավիացիոն պատահարների, միջադեպերի և իրադարձությունների հետաքննություններին, որի շրջանակներում, ըստ անհրաժեշտության, պահանջել համապատասխան տեղեկատվություն.
- ժամանակին ներկայացնել աերոնավիգացիոն սպասարկման և աերոդրոմների շահագործման բնագավառներում թռիչքների անվտանգությանն առնչվող խափանումների վերաբերյալ ստացված ամսական զեկույցների վերլուծության արդյունքում կազմվող եզրակացությունները.
- այլ մարմիններից կամ պաշտոնատար անձանցից ստանալ Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- ըստ անհրաժեշտության, Վարչության առջև դրված խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքերում ներգրավել Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կամ ավիացիայի բնագավառի կազմակերպությունների համապատասխան մասնագետների, որոնք ունեն անհրաժեշտ որակավորում Կոմիտեի նախագահի թույլտվության և կազմակերպությունների համաձայնության դեպքում:

Պարտականությունները՝

- մշակել Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, հեռանկարային ծրագրեր՝ կապված ոլորտի զարգացման հետ.
- մշակել սերտիֆիկացված աերոդրոմների, աերոնավիգացիոն և քաղաքացիական օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկում իրականացնող կազմակերպությունների գործառույթներից և խնդիրներից բխող մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.
- կազմակերպել և մասնակցել աերոդրոմների սերտիֆիկացման, աերոնավիգացիոն և քաղաքացիական օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվության տրամադրման գործընթացներին.
- ներկայացնել եզրակացություն աերոդրոմներին սերտիֆիկատ, աերոնավիգացիոն և քաղաքացիական օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվություն տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ.
- վերահսկել սերտիֆիկացված աերոդրոմների և այնտեղ շահագործվող վերգետնյա միջոցների և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների համապատասխանությունը սերտիֆիկատի կամ թույլտվության պահանջներին,

ինչպես նաև ՀՀ իրավական ակտերով և քաղաքացիական ավիացիայի ոլորտի միջազգային կազմակերպությունների (ԻԿԱՕ, ԵԱՍԱ, ՄԱԿ) կողմից սահմանված չափանիշերին և ստանդարտներին.

- իրականացնել սերտիֆիկացված աերոդրոմների և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների ռիսկերի գնահատման գործընթացների վերահսկողությունը.
- ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված սերտիֆիկացված աերոդրոմներում և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններում ռիսկերի նվազեցմանը.
- սահմանել վերահսկողություն սերտիֆիկացված աերոդրոմների և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների թռիչքային անվտանգության և որակի կառավարման համակարգերի պահանջների կատարման նկատմամբ.
- աերոդրոմների շահագործման և աերոնավիգացիոն սպասարկման բնագավառնե-րում թռիչքների անվտանգության հետ կապված խափանումների վերաբերյալ ստացված ամսական զեկույցների հիման վրա կազմակերպել լրացուցիչ ուսումնասիրություններ և դրանց արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություններ.
- վերահսկողությունների կամ ուսումնասիրությունների ընթացքում թռիչքների անվտանգությանն անմիջականորեն սպառնացող անհամապատասխանությունների և թերությունների ի հայտ գալու դեպքում, մինչ հաշվետվություններ ներկայացնելը, դրանց մասին անմիջապես տեղեկացնել Կոմիտեի նախագահին և մշակել թռիչքների անվտանգության ուղեցույց՝ համաձայն միջազգային կանոնակարգերով սահմանված պահանջների.
- թռիչքների անվտանգությանը սպառնացող բարձր ռիսկերի պայմաններում ներկայացնել առաջարկություն սերտիֆիկատի և թույլտվության դադարեցման կամ կասեցման, ինչպես նաև սահմանափակումների կիրառման վերաբերյալ.
- վերահսկել աերոնավիգացիոն տեղեկատվության հրապարակման գործընթացը.
- ներկայացնել եզրակացություն աերոդրոմներում և աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններում նախատեսվող նշանակալի փոփոխությունների վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ավիացիայի բնագավառում օդանավակայանների սերտիֆիկացման կամ շահագործման կազմակերպման կամ օդային երթևեկության կազմակերպման կամ սպասարկման գործունեության չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Աշխատակազմի կառավարում

2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Փոփոխությունների կառավարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն, և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումների և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: